**ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ**
**CW-NCB-LRNIP-2016/4**

**Հայաստանի Հանրապետություն**
**Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր**
**Վարկի No. 8229-AM**
**Պայմանագրի անվանումը՝ Ջանֆիդա համայնքի N1 փողոցի Կմ 0+000-Կմ 2+604 հիմնանորոգման շինարարական աշխատանքներ**
**Հղում No. CW-NCB-LRNIP- 2016/4**

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում Կենսական Նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով, և մտադիր է այդ գումարից վճարումներ կատարել **Ջանֆիդա համայնքի N1 փողոցի Կմ 0+000 –Կմ 2+604 հիմնանորոգման շինարարական աշխատանքներ** պայմանագրի շրջանակներում: Այս պայմանագիրը իրականացվելու է Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապեըության կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացն իրականացվելու է ՀԲ–ի կողմից սահմանված կանոնների և ընթացակարգերի պահանջների համաձայն:

2. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը հրավիրում է ներկայացնելու փակ հայտեր՝ իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող հայտատուների կողմից Պայմանագիր **CW-NCB-LRNIP- 2016/4** ներքո **Ջանֆիդա համայնքի N1 փողոցի Կմ 0+000 –Կմ 2+604 հիմնանորոգման շինարարական աշխատանքներն** (ՀՀ, Արմավիրի մարզ) իրականացնելու համար: Աշխատանքները ներառում են՝ գոյություն ունեցող ենթահիմքի քանդում և նոր ենթահիմքի կառուցում, նոր խճային հիմքի կառուցում, ասֆալտե ծածկույթ, փոսային նորոգում, հարթեցնող շերտի տեղադրում, ասֆալտ-բետոնե շերտի տեղադրում, ջրահեռացում, ճանապարհային անվտանգության ապահովման աշխատանքներ: Աշխատանքները պետք է ավարտվեն **12 ամսվա ընթացքում**:

Պայմանագրին արժանանալու համար հայտատուն պետք է ունենա նմանատիպ շինարարական աշխատանքների փորձ եւ համապատասխան ռեսուրսներ, ինչպես մանրամասնվել է մրցութային փաթեթում:

3. Մրցույթը կիրականացվի Համաշխարհային Բանկի կողմից ընդունված և 2011թ հունվարին հրապարակված և 2014թ հուլիսին վերանայված <<Ուղեցույցներ: ՄԶՎԲ վարկերի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում վարկառուների կողմից ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ>> ուղեցույցներով (Գնումների ուղեցույց) սահմանված գործընթացների կազմակերպմամբ՝ Ազգային Մրցակցային Մրցույթի եղանակով: Մրցույթը բաց է Գնումների ուղեցույցում սահմանված բոլոր իրավասու հայտատուների համար: Ի լրումն, խնդրում ենք անդրադառնալ 1.6 և 1.7 կետերով սահմանված շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային Բանկի քաղաքականությանը:

4. Հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկից esargsyan@transportpiu.am, hordukhanyan@transportpiu.am, armenabovyan@transportpiu.am և ուսումնասիրել դրանք ստորև նշված հասցեում՝ երկուշաբթի–ուրբաթ օրերին ժամը 09:00-ից մինչև 17:00:

5. Հետաքրքրված իրավասու հայտատուների կողմից ամբողջական մրցութային փաթեթը անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեով գրավոր դիմում ներկայացնելու և 50,000 ՀՀ դրամ գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է՝ բանկային փոխանցումը հետևյալ հաշիվներին.

**Շահառու. ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկ**
**ՀՀ դրամի համար. Հաշիվ #900000908096**
**ՀՀ Կենտրոնական բանկ**

Մրցութային փաթեթը (հնարավոր հայտատուները կարող են ծանոթանալ նախագծերին ՏԾԻԳ գրասենյակում) հասանելի կլինի նաեւ www.gnumner.am կայքում: Սակայն ՏԾԻԳ-ը պատասխանատվություն չի կրում թերի կամ սխալ ներբեռնված փաստաթղթերի համար:

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով **մինչև 2016թ. հուլիսի 04-ը, Ժամը 15:00**: Չի թույլատրվում ուղարկել հայտերը էլեկտրոնային փոստով: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտեր կբացվեն **2016թ. հուլիսի 04-ին, ժամը 15:01** (Երևանի ժամանակով) մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ՝ստորև նշված հասցեով:

7. Հայտը պետք է ուղեկցվի Մրցույթին մասնակցելու երաշխիքով ՝**7 050 000 (յոթ միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ:**

8. Վերևում նշված հասցեն է՝

«Տրանսպորտի ԾԻԳ » ՊՀ սենյակ N 312ա
պրն. Է.Սարգսյանին, « Տրանսպորտի ԾԻԳ » ՊՀ տնօրեն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ՀՀ, Երևան 0010, Նալբանդյան 28
Հեռ.՝ (+37410) 58 05 23,
Ֆաքս՝ (+37460) 54 05 25
Էլ. Փոստի հասցե՝ esargsyan@transportpiu.am, hordukhanyan@transportpiu.am, armenabovyan@transportpiu.am